

ույժ հարյուր արածող ձի, ութսուն գրաստ՝ ձի և չորի, 12 հազար ոչխար, քառասունութ պուստին (գլուղ) և այլն»:

Այս քաղվածքներում բերված են տվյալներ ստրուկների, ապա և ֆեոդալ-գինատների գեմ պետության ձեռնարկած միջոցառումների, զինվորական կալվածների, իմունիտետի, դավանաբանական պայքարի, պատկերամարտության, դպրոցական կյանքի, դերասանների ու պարողների մասին և այլն:

Երրորդ ենթագլուխը նվիրված է քաղաքներին և քաղաքային բնակչությանը: Աղբյուրներից ընտրված հատվածները վերաբերում են կուրիալներին, քաղաքապետներին, արհեստավորական կորպորացիաներին (որտեղ լայնորեն օգտագործված է «էպարքոսի գիրքը»), քաղաքաշինությանը, առևտրին, դրամաշրջանառությանը և այլն: Այս բաժնի նյութը գլխավորապես վերաբերում է VI դարին (Հուստինիանոս I-ի օրենսգիրքը) և IX—X դդ. («էպարքոսի գիրքը»):

Վերջին՝ չորրորդ ենթագլուխը վերաբերում է գյուղական բնակչությանն ու ագրարային հարաբերություններին: Այստեղ խոսվում է կոլոնների, իմունիտետի, ագարակների և պուստինների, հողի բաժանման, գյուղատնտեսական աշխատանքների, անասնապահության, ձկնորսության մասին և այլն:

Ի. Կարայաննոպոլսն իր գրքի վերջում տալիս է երեք մասից բաղկացած մատենագիտություն (աղբյուրներ, ժողովածուներ և մենագրական ուսումնասիրություններ):

Որպես աշխատության հիմնական թերություն պետք է նշել այն, որ բազմազան ու բազմապիսի հարցերի վերաբերյալ ընտրված նյութը վերաբերում է կոնկրետ ժամանակաշրջանների և չի արտացոլում կայսրության հաղորամյա պատմության ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները: Հեղինակը ցանկություն է ունեցել ընթերցողին հասցնել դարերի խորքից եկող «բյուզանդական ձայնը», սակայն չպետք է մոռանալ, որ այդ «ձայնը» իրականում մեներգիի ձայն չէր, այն բազմերանգ էր ու բազմահնչյուն: Ընթերցողը լսում է այն աղբյուրների ձայնը, որոնցից Կարայաննոպոլսը ընտրություն է կատարել: Դա մեծ մասամբ պաշտոնական ձայնն է: Աշխատությունը շատ կշահեր, եթե հեղինակը օգտագործած լիներ քառորդ դար առաջ սովետական բյուզանդագետների հրատարակած «Сборник документов по социально-экономической истории Византии» (М., 1951) ժողովածուն, որտեղ տրված է խնդրի զարգացման գինամիկան և որտեղից լսելի են ոչ միայն պաշտոնական ձայները:

Չնայած թերություններին, Ի. Կարայաննոպոլսի ժողովածուն օգտակար է, քանի որ այնտեղ ի մի բերված փաստական հարուստ նյութը օգնում է զաղափար կազմելու այս կամ այն ժամանակաշրջանում բյուզանդիայի ներքին կյանքի տարրեր կողմերի մասին:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. ԲԱՐՔԻԿՅԱՆ

HEIDE und HELMUT BUSCHHAUSEN, mit hilfe von EVA ZIMMERMANN, *Die illuminierten armenischen Handschriften der Melchitaristen-Congregation in Wien*, Wien, 1976, S. 113, Abb. 250 farb.

ՀԱՅԳԵ և ՀԵԼՄՈՒՏ ԲՈՒՇՀԱՈՒՋԵՆՆԵՐ, *աշխատակցությամբ ԵՎԱ ՅԻՄՄԵՐՄԱՆՆԻ, Վիեննայի Մխիթարյան միաբանության հայկական նկարազարդ ձեռագրերը, Վիեննա, 1976, 113 էջ, 250 գունավոր վերարտադրություն:*

Հայկական մանրանկարչությանը նվիրված այս նոր ալբոմ-ձեռագրացուցակը հասարակության ուշադրությանն է ներկայացնում Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի դանձերից 40 լավագույն նկարազարդ ձեռագրեր: Գիրքը հրատարակել են պրոֆեսոր, դոկտոր Հելմուտ Բուշհաուզենը և իր կինը՝ Հայդե Բուշհաուզենը (աշխատակցությամբ նվա Յիմմերմանի), Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սերաստացու ծննդյան 300-ամյա հոբելյանի առթիվ:

Սույն հրատարակությունը իրենից ներկայացնում է և՛ մանրակրկիտ ձեռագրացուցակ, և՛ մանրանկարչական ալբոմ, և՛ ուսումնասիրություն՝ նվիրված գրքում ընդգրկված ձեռագրերի մանրանկարներին: Աշխատության հեղինակները, ինչպես նշվում է առաջաբանում, ծանոթանալով Վիեննայի Մխիթարյանների 2000 գրչագրերին, նրանցից ընտրել են մանրանկարչական արվեստի տեսակետից ամենաարժեքավորները, որոնցից ալբոմում ներկայացված են 250 դունավոր վերարտադրություններ:

Վիեննայի հայերեն ձեռագրերի մինչև օրս հրատարակված ցուցակները՝ գրեթե զուրկ են մանրանկարների վերարտադրություններից և այդ մատենադարանում պահվող արվեստի նմուշները մնում էին անծանոթ։ Այժմ, սույն աշխատության շնորհիվ, մեր աչքի առջև բացվում են հին հայկական կերպարվեստի նոր զանգեր։ Չնայած նախկինում հրատարակված ցուցակներում տրված են ձեռագրերի մանրամասն նկարագրությունները, սակայն քննարկվող աշխատության հեղինակներն անհրաժեշտ են համարել նորից նկարագրել այդ ձեռագրերը, առաջնորդվելով ձեռագրագիտական արդի մեթոդներով, և, մասնավորապես, Հերբերտ Հունգերի կողմից մշակված հունական ձեռագրեր նկարագրելու նոր եղանակով, ըստ որի մանրանկարները նկարագրված են ավելի մանրամասն, քան նախորդ ձեռագրացուցակներում։ Illumination (թվարկվում են առկա մանրանկարները), Dekoration (տվյալներ ձևավորման մասին), Miniaturen und Schmuckseiten (մանրանկարների և լուսանցադարձերի մանրամասն նկարագրություն) և, վերջապես, Stilkommentar (մանրանկարների ոճական առանձնահատկությունների մեկնություն)։

Ալբրեխտ-ձեռագրացուցակում նյութերը ներկայացված են ժամանակագրական կարգով, ուստի սկզբում տեղադրված են հավաքածոյի հնագույն Ավետարանի մի քանի պատառիկներ (X դար), որոնց գունավոր վերարտադրությունները հրապարակվում են առաջին անգամ։ Ցուցակի հեղինակները իրավացի են տեսնելով այստեղ երկու տարբեր նկարիչների աշխատանք (խորանների ծաղկող և տերունական նկարների ծաղկող)։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում մի մագաղաթյա անվանաթերթ (Մարկոսի ավետարանի), որ ժամանակին օգտագործվել է որպես պահպանակ։ Հ. Տաշյանի հետևությունները Բուշնուգենները ևս թվագրում են այն XII դարով, տվյալ անվանաթերթը համարելով կիլիկյան մի ձեռագիր պատառիկ։ Թվում է, սակայն, որ հաստատապես այդ պնդել այժմ դժվար է, քանի որ նմանատիպ զարդարված անվանաթերթերի հանդիպում ենք նաև XII—XIII դդ. Բարձր Հայքի և Խարբերդի ձեռագրերում։

Քննարկվող ձեռագրացուցակ-ալբոմում տեղ գտած հավաքածոյի № 242 ձեռագիրը հանդի-

սանում է հեղինակների հատուկ ուշադրության առարկան։ Ինչպես նշված է գրքի առաջաբանում, Բուշնուգենները սկզբում նպատակ են ունեցել զբաղվելու հատկապես այս ձեռագրի ուսումնասիրությամբ, որի առանձին հրապարակումը հեղինակները պատրաստվում են իրագործել մոտ ապագայում։ Այդ ձեռագրի գլխավոր հիշատակարանը չի պահպանվել, սակայն հեղինակները հիմնավոր ապացույցներով նրա ստեղծումը վերագրում են Ղրիմի հայ վարպետներին, հույն նկարիչների մասնակցությամբ։ Մանրակրկիտ ուսումնասիրությունը հեղինակներին բերում է այն եզրակացության, որ ձեռագիրը նկարագրողվել է վեց նկարիչների կողմից, որոնցից երկուսը հույն են եղել, իսկ չորսը՝ հայ։ Աշխատության մեջ ճշտվում է նաև ձեռագրի ստեղծման մոտավոր ժամանակը՝ 1330 թ.։ Այդ եզրակացություններին հեղինակները հանգում են հիմնականում համեմատելով ձեռագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7664 Ավետարանի հետ, որը գրվել է Սուրխաթում 1332 թ. Գրիգոր Սուքիասանցի ձեռքով։ Լ. Ա. Գուրնովոն իր ալբոմներում հրապարակելով այդ ձեռագրի մանրանկարներից մի քանիսը, նկատել է, որ Գրիգոր Սուքիասանցը նաև ձեռագրի ծաղկողն է։ Վիեննայի № 242 ձեռագրի մանրանկարների ակնառու նմանությունը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7664 ձեռագրի մանրանկարներին ևս մի միտք է հուշում՝ կարող էին արդյոք Վիեննայի ձեռագիրը ստեղծող վարպետներից ոմանք մասնակցած լինել նաև այս ձեռագրի ստեղծմանը և հակառակը. հնարավոր չէ՞, արդյոք, որ Գրիգոր Սուքիասանցը լինե՞ր այն չորս հայ ծաղկողներից, որոնք նկարագրողել են Վիեննայի № 242 ձեռագիրը։ Որոշակիորեն պատասխանել այդ հարցին հնարավոր կլինի միայն վերոհիշյալ ձեռագրերի մանրանկարների բաղդատությունից հետո։ Այդ առումով Վիեննայի ձեռագրում պահպանված կցկտուր հիշատակագրությունները որոշ փաստական նյութ են տալիս։

Բուշնուգենները Վիեննայի ձեռագիրը վերագրում են Ղրիմի վարպետներին, ելնելով սոսկ նրա մանրանկարների ոճական առանձնահատկություններից։ Այդ ենթադրությունը կարելի է հիմնավորել նաև փաստական տվյալներով։ Համաձայն ձեռագրում պահպանված հիշատակագրության, նրա գրիչը եղել է Սիմեոն Եռեցը՝ ռդՍիմեոն ապիրատ գրիչս յիշել աղաչեմ²,— գրված է ձեռագրի 186ր էջի հիշատակագրության մեջ։ Սիմեոն Եռեցը աշխատել է Սուրխաթում XIV դարի առաջին կեսին, 1343 թ. նա

¹ Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հատ. Ա, Վիեննա, 1895։ Հ. Ոսկյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեանց Մատենադարանին ի Վիեննա, հատ. Բ, Վիեննա, 1963։

² Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 630։

գրում է մի Ավետարան, որի հիշատակարանում կարդում ենք. «Ջեռամբ իմով, Սիմեոնի, մեղուցեալ յետին և անարժան երիցուի և ապիրատ գրչի»³։ XIV դարի սկզբին Ղրիմում գրվել է նաև մի Տոնական (այժմ Փարիզի Ազգային գրադարանի հայկական № 116—118 ձեռագիրն է), որի գրիչներն են Գրիգոր Սուքիասանցը և Սիմեոնը։ Հետաքրքիր է հատկապես վերջինի հիշատակագրությունը՝ «...[Տէր Աստուած] ողորմեա ստացողի սորա Աւետիք վարդապետին և ծնողաց իւրոց... ընդ նմին և զառածեալ մեղաւք զՍիմեոն գրիչս Բարերդացի և ծնողաց իմոց և զաւակաց իմոց Պապանունին և Աստուածատրին, որ ի նիւթ սորա աշխատեցան...»⁴։ Այստեղ հետաքրքիր է Պապանունի՝ Սիմեոնի որդի լինելու մասին տեղեկությունը։ Բուշհաուդեններին հաջողվել է Վիեննայի ձեռագրի 216-րդ էջում լուսանցազարդի մոտ կարդալ հետևյալ հիշատակագրությունը. «Ձապապանուն երէց յիշեցէք» (էջ 23)։ Ըստ երևույթին երկու դեպքում էլ գործ ունենք նույն Սիմեոն գրչի և իր որդու՝ Պապանուն ծաղկողի հետ, որոնք մասնակցել են ինչպես Փարիզի № 116—118 Տոնականի, այնպես էլ Վիեննայի № 242 Ավետարանի ստեղծմանը, ընդ որում, առաջին ձեռագրի ստեղծմանը մասնակցել է նաև Գրիգոր Սուքիասանցը, որը ընդօրինակել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7664 Ավետարանը։ Այսպիսով, անտարակույս է Ղրիմի գրչատներում XIV դարի սկզբին վերը հիշված վարպետների աշխատակցությունը։

Վիեննայի № 242 ձեռագրի մանրանկարների վերարտադրությունները թույլ են տալիս տեսնել նրանց մեկ այլ ընդհանրությունը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 7664 ձեռագրի մանրանկարների հետ. երկու դեպքում էլ մանրանկարների գունային շերտը նույն ձևով կտորկտոր թափված է, որը վկայում է նույն նյութերի օգտագործման մասին՝ թե՛ ներկերի, թե՛ թղթի որակի առումով։ Ճեղքի որոշ ընդհանրություններ, հյուսիս շերտով ներկերի օգտագործումը կապվում են որմնանկարային տեխնիկայի հետ։ Հավանաբար, քննարկվող ձեռագրերի վարպետները հմուտ էին նաև մոնումենտալ կերպարվեստի բնագավառում, որը, ինչպես հայտնի է, զարգացած էր Ղրիմի հայերի մոտ։

3 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայեռէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հատ. Ա, Վենետիկ, 1914, էջ 755։ Լ. Ս. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 336։

4 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ..., հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 512։

Այրումում տեղ են գտել Ղրիմի ևս երկու ձեռագրեր՝ 1342 թ. նաեւերի ձեռքով գրչագրած Ավետարանը (№ 849) և Ներսես Շնորհալու բանաստեղծությունները, ընդօրինակված Կաֆայում 1432 թ. անվանի գրիչ և ծաղկող Քրիստոսատուրի ձեռքով։ Վերջինիս գործերից երեքը այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (№№ 7686, 2387 և 7434), սակայն Վիեննայի հավաքածոն պահպանել է այդ արվեստագետի ամենաճոխ զարդարված մատյանը։ Սույն ձեռագիրը, բացի ամբողջական էջ դեղեցնող մանրանկարներից, բազմաթիվ մանրանկարներ ունի նաև տեքստի մեջ և լուսանցքներում, որոնք թե՛ պատկերագրությամբ, թե՛ կատարողական եղանակով հիշեցնում են կիլիկյան վարպետների աշխատանքները։

Հավանաբար նույնպես Ղրիմում է ստեղծվել հավաքածուի № 59 Ավետարանը, որը գրվել է 1375 թ. առաջ։ Բուշհաուդենների ուշագրությունից չի վրիպել այդ ձեռագրի մանրանկարչություն կապը XIV դարին բնորոշ արվեստի հետ, որի էությունը կիլիկյան ավանդույթների օգտագործման, նրանց ձևերի պարզեցման և դեկորատիվության ուժեղացման մեջ էր։ Գրաֆիկական և գեղանկարչական եղանակների յուրահատուկ զուգորդումը, զարդաձևերի բնորոշ տարրերակները, պատկերագրությունը, մշակման տեխնիկան, գունաշարի մեջ մուգ կապույտի գերակշռությունը՝ այդ ամենը բնորոշ է նաև Ղրիմում ստեղծած մի շարք նկարազարդ ձեռագրերի։ Հեղինակները նկատում են նաև այդ ձեռագրի մանրանկարների որոշակի աղբյուրները՝ Սարգիս Պիծակի արվեստի հետ։ Ի դեպ, Սարգիս Պիծակի ձեռքով զարդարված երկու ձեռագրեր արդեն XIV դարում եղել են Ղրիմում և այդ վարպետի արվեստը, անկասկած, որոշ ազդեցություն է ունեցել զրիմահայ նկարիչների վրա⁵։

5 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ 7631 և 7651։ Վերջին ձեռագիրը հանդիսանում է հանրահայտ 8 նկարիչների Ավետարանը, որի մանրանկարների մի մասը կատարել է Սարգիս Պիծակը։ Վիեննայի № 59 ձեռագրի մանրանկարները համեմատելով Սարգիս Պիծակի աշխատանքների հետ, հեղինակները վկայաբերում են 1338 թ. Աստվածաշունչը։ Այստեղ թույլ է տրված վրիպում (էջ 61), ուստի ճշտում ենք. 1338 թ. Աստվածաշունչը այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում և կրում է 2627 համարը (էջմիածնի նախկին № 359), այն գրված է կիլիկիայում և ոչ թե նրգնկայում, իսկ նրանց կողմից նշված № 5708 ձեռագիրը Ավետարան է, ծաղկված Սարգիս Պիծակի ձեռքով Սկևռայում, 1325 թ.։ Յույց

Սույն ալբոմ-ձեռագրացուցակում ներկայացված են նաև կիլիկյան ձեռագրեր, որոնց շարքում ձևավորման առումով ամենաարժեքավորը հավաքածոյի № 278 Ավետարանն է, ստեղծված XIII դարում: Զեռագրի բուն հիշատակարանը չի պահպանվել և ձեռագրացուցակի հեղինակները, հետեւելով Ս. Տեր-Ներսէսյանին, այն համարել են XIII դարի կիլիկյան անանուն մի վարպետի գործ, որի վրձինն են պատկանում մի շարք շքեղ զարդարված ձեռագրեր և որոնք ժամանակին վերագրվել էին Թորոս Ռոսլինին: Թվում է միայն, որ Վիեննայի № 278 ձեռագրի ստեղծմանը պետք է մասնակցած լինեն Երկու վարպետներ. ինչպես երևում է մանրանկարների բավական հստակ վերարտադրություններից, ավետարանիչների կերպարները որոշակիորեն տարբերվում են լուսանցքներում պատկերված դեմքերից (վերջինների եղրագծերը կատարված են ավելի ազատ և ճկուն, տարբերվում են նաև գիմագծերը. դրանց խոր նստած աչքերը և ցածր հոնքերը յուրահատուկ արտահայտչականություն են հաղորդում կերպարներին):

Ուշադրության արժանի են նաև Կեղծ Կալիսթենեսի «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» երկու այն պատառիկները, որոնք ժամանակին հանված են եղել Վենետիկի № 424

տանք ևս մի երկու վրիպում. աշխատության 42-րդ էջում մատնանշված 1401 թ. ձեռագիրը, գրված Կաֆայում, կրում է Մաշտոցի անվ. Մատենադարանի 3863 համարը և ոչ 121, իսկ Վիեննայի № 59 ձեռագրի 234ա էջի մեղալյունում պատկերված է ոչ թե Հովհաննեսը, այլ Քրիստոսը (էջ 61):

ձեռագրից և որոնցից մեկի գունավոր վերարտադրությունը լույս է տեսնում առաջին անգամ: Լինելով XIV դարի մանրանկարներ, դրանք աշխարհիկ բովանդակությամբ հայկական մանրանկարների հնագույն նմուշների թվին են պատկանում:

Ալբոմում ներկայացված են նաև XVI—XVII դդ. վասպուրականի և Կոստանդնուպոլսի մի շարք նկարազարդ ձեռագրեր, ինչպես և Կամենեցի ու Սուլավայի հայկական գաղթավայրերի մանրանկարչական արվեստի երկու օրինակ:

Վիեննայի նկարազարդ ձեռագրերի լապտաղային նմուշների հրապարակմամբ ծանրակշիռ ներդրում է կատարված հայկական միջնադարյան արվեստի ուսումնասիրության բնագավառում: Այդ հավաքածոյի մանրանկարչական նմուշների բարձրորակ վերարտադրությունները հնարավորություն են ընձեռում նոր լույսի տակ քննարկելու հայկական մանրանկարչության զարգացման մի շարք կարևոր հարցեր:

Հեղինակները հակիրճ, բայց դիպուկ բնութագրերով որոշակի պատկերացում են տալիս ամեն մի հուշարձանի մասին, առանձին դեպքերում ճշտելով ձեռագրերի ստեղծման վայրն ու ժամանակը: Արժեքավոր են նաև մանրակրկիտ նկարագրությունները և պատկերագրական դիտողությունները:

Գիրքը հրատարակված է պոլիգրաֆիկ բարձր մակարդակով, ձևավորման մեծ ճաշակով և արժանի է բարձր գնահատանքի թե՛ որպես մանրանկարչական գեղեցիկ ալբոմ, թե՛ որպես ձեռագրացուցակ և թե՛ որպես լուրջ գիտական ուսումնասիրություն:

Է. ԿՈՐԽՄԱՋՅԱՆ